


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Շատ մը երկիրներու մէջ՝ տնայեալ մի քանի տարիներու միջոցին՝ պետական զարոյցները աշխարհականացնելու գործին մէջ արմատական փոփոխութիւն մը յառաջ եկաւ. ասոր իբր հետեանք ամէն տեղ գաստիարակները հարկադրուեցան լրջօրէն նկատի առնել սա հարցը, թէ ինչ է գաստիարակութեան նպատակը և թէ ի՞նչպէս զայն պէտք է իրականացնել:

Մինչև մօտերս այնպէս կը նկատուէր թէ գաստիարակութեան նպատակն է Ծախօրութիւններու անքառուր կամ ընդհանուր կրթութիւն մը: Աշխարհի մասին մեր զիտցածները, մեր բոլոր ծանօթութիւնները առ հասարակ արագօրէն կ'աւելնային: Աշակերտը պէտք էր օժտուիլ այսպիսի ծանօթութիւններու կարելի առաւելագոյն պաշարով մը, որ պիտի գործածուէր իբր նիւթ իր կեանքը կիրառելու:

Իսկ զաւով բարձր աստիճանի ուսումին, կրթութիւնը կը բաղկանայ լեզուներու և արուեստներու ուսուցումէն, որ բարձր գաստիարակ ընտրեալ մի քանիներու առանձնաշնորհումն էր: Այս նիւթերուն ուսուցման մէջ նպատակը զանոնք կեանքի մէջ օգտագործելն էր:

Երբ ճարտարարուեստը մեծապէս յառաջ-

գրեց՝ միայն իր սիրոյն համար ծանօթութիւններ հաւաքելը տնտեսական թուեցաւ. կրթութեան գործնական կողմը աւելի շեշտուեցաւ, և կրթութեան չափանիշը նկատուեցաւ այն զիւրութիւնը և յաջողութիւնը, որով մէկը կրնար իր ապրուստը անոյ: Ներկայիս շատ մը մարդիկ կրթութեան արժէքը կը գնահատեն միայն անոր զբաղ շինելու կարողութեամբը:

Խորհող մարդու մը համար այս երեք նշանակաւորներէն ո՛չ մէկը կատարելապէս զոհացուցել է: Այնպէս կ'երեւակայեմ որ ընթերցողներուն մեծամասնութիւնը ինծի հետ պիտի համաձայնին իբր ըսեմ թէ գաստիարակութեան իրական նպատակն է նկատագրի կազմակերպումը: Եւ շատ քաջալերիչ է տեսնել թէ ամէն տեղ գաստիարակները սկսած են այս շայնարժակ նպատակը աւելի ու աւելի շեշտել: Տօքթ. Քէտմէն կրթութեան նպատակին լուսագոյն սահմանումը կուտայ երբ կըսէ. «Խնդիրներ, ուսուցիչներ և մանուկներն ու երիտասարդները խնամողներ աւելի քան երբէք համոզուած են՝ թէ գաստիարակութեան ճշմարիտ նշանակէտը նկարագրին է եւ ո՛չ թէ միայն ծանօթութիւններու ամբարումը: Մեծամասնութիւնը կը հասկնայ թէ գաստիարակութիւնը էապէս կը արուի աշակերտները բարոյական կրթութեամբ մը օժտելու համար որ անկեղծ, ուղղամիտ, օգտակար մարդիկ և կրնան յառաջ կը բերէ:»

Դաստիարակութիւնը պէտք է մէկը պատրաստէ յաջող և երջանիկ կեանք մը տալու, և ոչ թէ միայն ապրուստ մը ապահովելու: «Դաստիարակութիւնը պէտք է աշակերտը ի վիճակի ընէ ուղիւ տեղը ապրելու այն տեսակ կեանք մը, զոր ինք կուզէ ունենալ:» Այս սահմանումը թէ՛ ամէն բան կը պարունակէ իր մէջ, և թէ՛ զործնական է: Ան կը պահանջէ յաջող կեանք մը, նկատի կ'առնէ անհատին ընդունակութիւնը, ան կը հրաւիրէ զայն ինքզինքը յարմարցնելու իր մէջը ապրած ընկերութեան:

Եթէ զպրոցին նպատակն է մանչերը և աղջիկները պատրաստել ընկերութեան մը մէջ ապրելու և իր քաղաքացիական պարտականութիւնները կատարելու, ուրիմն բարոյական կրթութիւնը պէտք է կազմէ անոր զործին զլիսաւոր մասը. քանզի ճշմարիտ բարոյական մը կարեւոր տարր մը պէտք է ըլլայ ընկերային պարտականութիւնները կատարելու համար եղած իր պատրաստութեան մէջ: Մենք պէտք չէ անտեսենք մտաւորական և կամ զործնական տարրերը դաստիարակութեան մէջ, բայց պէտք է համոզուինք որ զպրոցին նպատակը ամենէն աւելի նկատելի կազմութիւնն է:

Այսօր բարոյական դաստիարակութիւնը զպրոցներուն մէջ կը կատարուի անուղղակի կերպերով, այսինքն դաստիարակին նկարագիրը եւ կենդանի օրինակը ամենագորաւոր կերպով կ'ազդէ մանուկներու բարոյականին վրայ: Նկարագրի կազմութեան համար ամենամեծ ոյժը՝ ուսուցչի մը անձնաւորութիւնը եւ կենդանի օրինակն է: Այսպիսի կրթիչ մը կը շինէ զպրոցին մթնոլորտը: Ան իր աշակերտներուն զաղափարականն է: Անոնք անգիտակից կերպով կ'օրինակեն անոր ամեն մէկ զործը: Անոր ազդեցութիւնը չափել անկարելի է: Ուսուցչի մը համար ինչ հիմնալի առիթ մըն է, իր աշակերտներուն համար զաղափարական մ'ըլլալ, եւ ինչ ներշնչում մ'է ասոր բարձրունալ:

Մէկը ըսած է, «Նկարագիրը կը բռնուի, ոչ թէ կ'ուսուցուի»: Ան վարակիչ ախտի մը պէս փոխանցելի է, և անկեղծ ու նուիրեալ վարժապետի մը ձեռքը բարոյական կրթութեան է՝ զօրաւոր միջոցն է: Փրոֆ. Սթարպըք, Ամերիկեան մեծագոյն կրթիչներէն մէ-

կը որ բարոյական դաստիարակութեամբ խորագէտ հետաքրքրուած է, այսպէս ըսած է. «Եթէ ուսուցիչները կարենային բարոյականի հոգին ըմբռնել միայն, զպրոցը շատ զիւրութեամբ կրնար ըլլալ ընկերութեան բարոյական վերազարթնումին էն զօրաւոր ազդակը:

Եթէ կրթութեան էական մէթոտը կեանքի բոլոր պարագաները իրարու հետ բաժնել է, իր ուսանողներուն մէջ ուղիւ բարոյական մը շինելու ջանքը միշտ պէտք է բոլոր զպրոցական մթնոլորտին վրայ տարածուի: Այս նպատակը իրագործելու համար կարեւոր միջոցն է ուսուցչին անձնաւորութիւնէն արտաբոլոր ազդեցութիւնը: Թող այն այս բաժնէ իր աշակերտներուն հետ՝ իր զտած յարմարագոյն միջոցներով:

Է. ՓԱՐԹՐԻՃ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսուցչին պարտականութիւնը ուսուցանել է:

Ան պարտի ուսուցանել՝

Նախ. Այն գրքերն ու զիտութիւններն զորս կը դասաւանդէ իր աշակերտներուն: Ուսուցչի կոչում ունեցող անհատը՝ նախ ինքը կատարելապէս իւրացուցած պէտք է լինի իր սորվեցնելիքը, և ապա զիտնայ զայն իր աշակերտներուն սորվեցնելը: Սխալ է կարծել թէ լաւ զիտցողը լաւ ալ կրնայ սորվեցնել: Հատ անգամ տեսնուած է որ այսինչ լիզուն կամ զիտութիւնը խիստ լաւ զիտցող ուսուցիչ մը բոլորովին կ'անճրկի կը միայն դասուրանին մէջ՝ երբ խնդիրը աշակերտներուն սորվեցնելու վրայ է: Պէտք է զիտնալ որ ուսուցանելը բոլորովին զատ արուեստ մ'է. արուեստ մը՝ որ զրաէն տեսնուածին չափ պարզ ու զիւրին չէ բնաւ: Մենք այս հակիրճ զրութեամբ ուսուցման ալ ուստի նորութիւններու մատին չենք կրնար ճառել. բայց էական կը համարենք մատնանշել թէ լաւ ուսուցիչ մը ի հարկէ պէտք է իր մէջ միայնէ առնուազն հետեւեալ երեք բարեմասնութիւնները. — Իր սորվեցնելիքի մասին կատարեալ հետաքրքրութիւն ունենալ, ուսուցանելու արուեստը զիտնալ, և աշակերտներին կառավարելու (ընկրող) կարողութիւնն ունենալ:

Երկրորդ. Ուսուցիչին պարտականութիւնը սորվեցնել է ոչ միայն գիրքէն, լեզուներ կամ գիտութիւններ, այլ շատ մը ուրիշ բաներ՝ ուրեմն աշակերտը պիտի առաջնորդեն կատարեալ մարդ ըլլալու:

Եւ ի՞նչպէս պիտի սորվեցնէ զայն. — Իր իսկ կեանքովը և նկարագրովը: Նկարագրովը՝ զիրքով չի շինուիր, այլ կեանքով: Հետեալ բար իր պարտականութեան ճշմարտապէս գիտակից ուսուցիչ մը երբէք պէտք չէ զոհանայ՝ երբ յաջողակօրէն սորվեցնէ միայն իր մասնաճիւղին դասերը, այլ ալ աւելի մասնագիտութեան՝ որպէսզի իր աշակերտները բարձր նկարագրով մը կազմեն. օգտակար ըլլալու համար մարդկութեան՝ երբ կը ձգեն դպրոցական կեանքը՝ մտնելու համար կեանքի դպրոցը:

Երբ ուսուցիչ մը ճշգրտապահութեան, պարկեշտութեան, մաքրութեան, բարոյականի ու կրօնքի մասին ինքը իր ամենօրեայ կեանքին մէջ բժախնդիր չէ, թող չ'ակնկալէ որ իր աշակերտները բժախնդիր պիտի ըլլան. թող չ'պահանջէ, զոնք իրաւունք չունի պահանջելու: Ուսուցչի մը ամէնէն ծանր պարտականութիւնը ու ամէնէն օրհնեալ առանձնաշնորհումն է իր բարոյական ձեռքերուն յանձնուած այդ անմեղ փոքրիկ հրեշտակները մաքուր ու գեղեցիկ անհատներ ընել հոգւով, մտքով ու ժամանակով:

Ճշմարտ ուսուցիչը այն է, որ խղճի մը տօք կը կատարէ իր պարտականութիւնը, ուսուցանելով թէ իր դասաւանդած գիտութիւնները և թէ բարոյականի դասերը որոնց դասաւանդելը ինքն է ու իր անթերի նկարագրով:

Յ. Յ. ՊԱՊՅԱՆ

Ֆիլաթելֆիա քաղաքին Ս. Պողոս Եկեղեցիին մէջ այցելու մը գիտեց բոլոր չէնքը լեցնող հոծ ունկնդրութիւնը, և ապա ակնարկը ուղղեց քարոզչին, Տօքթ. Ճ. Ի. Միլլըրի, որ պարզ և համեստ երեւոյթ մը ունէր, և որուն ձայնը հազիւ լսելի էր սրահին ետեւը. և չար մաքով հարցուց իր քովը կեցող մէկուն «Այս ի՞նչպէս կարելի է. Ո՞ր է այս մարդուն ոյժը այս ժողովուրդը հրապուրելու համար»:

«Ոհ, պարոն, եթէ երբէք գուն տազնապի մէջ ըլլայիր և Տօքթ. Միլլըր քեզի այցելէր կամ զրէր, և կամ քեզի պտուղ կամ ծաղիկներ զրկեր, այս հարցումը անգամ մ'ալ երբէք չ'պիտի հարցնէիր», ըսաւ մարդը:

Ի՞նչ է Եկեղեցւոյ Վերաշինութիւնը

Տիար Գր. Ա. Սարգսեան Փարոս հոգեւորդէն թիւթին մէջ վերադրեալ նիւթին վրայ կը գրէ. «Եկեղեցական վերադարձում չնշանակէր անպատճառ եկեղեցիի մը արարողութիւններուն կրճատումը, ծիսական և վարչական ձեւերուն գեղեցիկանալը, ասոնք ի հարկէ ունին իրենց կարեւոր տեղը, բայց բանին լայն առումով եկեղեցական վերադարձումը ըսելով կը հասկնանք եկեղեցիին իր նոր միջավայրին յարմարելը, ժամանակի պահանջները նկատի առնելով հաւատացեալներու մտքին, սրտին ու հոգիին հետ անարգել շփուելը, ժողովուրդին կեանքին մէջ հեղինակաւոր ոյժ մը դառնալը... (Չայն) փոխանակ արտաքին բաներու մէջ որոնելու, պիտի փնտռէ եկեղեցւոյ արմատները նշուած (ընդգծուած մերն է), և անոր ներքին կենսականութիւնը բազմապատկելու մէջ: Ի՞նչ պիտի ընէր որ եկեղեցին վերաշինուի իր կենսական կոթիւնը. այս է... հարցը»: Եթէ այս վերադարձումը չ'իրականանայ կամ ուշանայ ապա անի մոթ կը տեսնէ շարքիլի յօդուածագիրը, յատկանշական է այն իրատեսութիւնը, որ կը յայտնուի իր հետեւեալ տողերուն մէջ. «Հայ եկեղեցին ճգնաժամի մէջ է հիմակ, կամ ևս պիտի երթայ կամ առաջ, կամ պիտի յարմարցնէ ինքզինքը իր նոր միջավայրին և կամ ալ պիտի տուժէ: Եթէ Հայ եկեղեցին կենսունակութեան նոր ոյժ մը չ'ուսանայ, ... անկրօնութիւնը և անհաւատութիւնը ուժգին թափով պիտի ծաւալին արդի սերունդին մէջ... Հայ ժողովուրդին բարոյական վերածնունդը Հայ եկեղեցիին վերադարձումն է կախեալ է»:

Բայց արդեօք տոնելու չ'հասա՞ւ ուսումնասիրելու, հպատակելու և զործադրելու այն միջոցները և նախաքայլերը, որոնք պիտի առաջնորդեն լուծելու այս կենսական հարցը «թէ ի՞նչ պիտի ընէր որ եկեղեցին վերաշինուի իր կենսունակութիւնը»:

ԱՌԱՐԵՒԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ատենէ մ'ի վեր Հ. Վ. Հացունի յօդուածաշարքի մը նիւթ ընտրած է Հայց. Եկեղեցին, Բարեկամային մէջ ճառելով անոր Ընդհանրական եկեղեցիէն բաժանումն և ոչ առաքել-

լականութեան մասին: Սիրոն յարմար պատասխան մը տուաւ ատենին ըսելով թէ՝ եթէ Հայց. եկեղեցւոյ աւանդութիւնները պատմականօրէն անձիշկ են ուրիշներունը երբեք չեն կրնար պտմին. քննադատութեան դիմանալ: Հայց. եկեղեցին այսօր շատ աւելի կարեւոր կենսական հարցեր ունի լուծելիք, և արծարծուած խնդիրը շատ իրաւունքով «Անհարկի եւ անտեղի վէճ մը» բացատրութեամբ կ'որակուի Պապի մէջ Ա. Ն. Նապարի կողմէն: Բայց ո՞րն է առաքելական եկեղեցին, եւ ի՞նչ է արժէքը ոսկէ մէկ եկեղեցիին առաքելի մը եւ կամ անոր միջոցաւ կարգ ստացած անհատի մը ջանքերով հաստատուելուն: Ա. Ն. Նապար ասոր ալ կը պատասխանէ գեղեցիկ կերպով. «Ինչպէս ամէն հաստատութեան, եկեղեցիներու ալ պայծառութիւնը կախում ունի ո՛չ թէ իրենց անունին կցուած անհայտներէ, առաքելական, ընդհանրական, ուղղափառ, և այլն, այլ իրենց ներքին կեանքէն ու կենսունակութենէն. կախում ունի այն լուսամտութիւնէն, որով կը վերաբերին ազատ խորհրդութեան հետ, այն լայնախոհութիւնէն ու յարգանքէն, չոր ցոյց կուտան ուրիշներու հանդէպ, և մանաւանդ այն ծառայութիւնէն, զոր կը մատուցանեն ժողովուրդին: Իսկ այն եկեղեցիները, որ կը ձգտին մարդկային միտքին թրուիչքը կաշկանդել ու խորհուրդները քարացընել որոշ կաղապարներու մէջ, կրնան կանգուն մնալ, ամուր ու փռուաւոր երեւիլ արտաքուստ, բայց չեն կրնար կեանք ունենալ:»

ՆՆՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Հայկապի մեջ Գոյեմ. 1924է ի վեր, երբ Տք. Ճ. Մէրիլ Հալէպ կեաւ, Կ.Թ. Գոլէճի Վարչական Մարմինը կը հոգար Հայ Բող. Մանչիւրու Բարձրագոյն Վարժարանը, որուն վերջին կարգը այս տարի կ'աւարտէ նախապատեւրագման Սօֆօմօր կարգի դասընթացքը: Կ.Թ. Գոլէճի Վարչութիւնը միշտ փափաքող եղած է Գոլէճը վերահաստատել հոս, բայց հաստատութեան Ամերիկա գտնուող խնամակալ մարմինը միշտ հակառակած է այս փափաքին իրաւործումին: Վերջերս խնամակալութիւնը երկար խորհրդակցութիւններէ յետոյ Վարչութեան իր վերջին որոշումը յայտնած է, որուն համեմատ Գոլէճի բոլոր հասոյթին գոր-

ծածութեան իրաւունքը և Գոլէճը վերահաստատելու պատասխանատուութիւնը կը թողու Հալէպ գտնուող Վարչական Մարմին, որ հետեւալ տասը անձերէ կը բաղկանայ. Տօքթ. Ա. Ա. Ալթունեան, Տօքթ. Ա. Յ. Ճէպէճեան, Վեր. Կ. Յ. Յարութիւնեան, Վեր. Ճ. Մարթին, Տօքթ. Գ. Սարգիսեան, Վեր. Լ. Մ. Ուիտլը-սփուն, Վեր. Ճ. Ք. Լայմըն, Վեր. Ա. Ա. Շիրաճեան, Տօքթ. Փոլատեան, Վեր. Հ. Հ. Բիկլ:

Վարչական Մարմինը ասոր վրայ կ'որոշէ 1) վերահաստատուելիք դպրոցը կոչել Հայկապի Գոյեմ, 2) այս անունով դպրոցի մը արտօնութիւնը ստանալու համար կառավարութեան դիմել, 3) քաղաքին մօտակայ յարմար վայր մը գնելու աշխատել: 400 Օս. ոսկիով այսպիսի գետին մը կարելի է հիմա ծախու առնել:

Ներկայ նիւթական միջոցները, զոր վարչութիւնը ունի, բաւական չեն այսպիսի հաստատութեան մը կանգնումին և պահպանումին. մանաւանդ որ Մանչիւրու Բարձրագոյն Վարժարանին այս տարուան ելեմուտքը հաւասարակշռելու համար 1500 տոլարի անմիջական պէտքն ունի: Մօտաւորապէս 100000 եղող Սուրիոյ հայութիւնը, որուն 10 000ը Աւետարանականներ են, անհրաժեշտ պէտքը ունին այսպիսի բարձր հաստատութեան. Աւետարանական եկեղեցին անմիջական պէտքը կը զգայ անոր, որպէսզի կարենայ հայթայթել կրօնական և կրթական գործիչները, եթէ երբեք ան պիտի կրնայ արժեցնել իր զոյնութիւնը՝ հաւատարիմ մնալով իր կոչումին: Այսպիսի հաստատութիւնէ մը անխտիր պիտի օգտուին ամէն ցեղէ և կրօնքէ անհատներ:

Ուստի կը յուսաւորի որ Կ.Թ. Գոլէճի բոլոր ուսումնաւարանները և թերաւարտ ուսանողները, անոր բարեկամները, հայրենակիցներ, քոյր եկեղեցիներ, և բարեգործ անհատներ պիտի փութան ընձեռելու իրենց լաւագոյն օժանդակութիւնը, նիւթապէս և բարոյապէս, որպէսզի այս սիրելի հաստատութիւնը կարենայ իր վայել զիրքին մէջ օգտակար հանդիսանալ ամբողջին:

Տք. Ճ. Մէրիլ մէկ տարուան նոր Աւետարիւր կը նուիրէ Օր. Մ. Էրէնճեանի՝ Պէյրութ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՍԵՌՆ ՈՒ ՍԵՐԸ. Կար ժամանակ մը երբ տգիտութիւնը պարկեշտութեան հոմանիշ կը նկատուէր: Մանաւանդ սեռային կեանքի առողջապահութեան մասին լսել, կարգաւ կամ զրել աննիւրի յանցանք մը կը նկատուէր եւրիտասարգներու համար: Բայց փորձը միգի կը ցուցնէ թէ շատ մը երիտասարգներ աւելի կը դառնան՝ յաճախ այս նիւթերու շուրջ իրենց բացարձակ տգիտութեան պատճառաւ: Տօքթ. Ա. Յ. Ճէպէճեան թանկագին ծառայութիւն մը կը մատուցանէ հանրութեան, հըրատարակելով իր Սեռն ու Սեռը մատենաշարը, որուն երկրորդ հատորը, մասնաւորապէս աղջկներու եւ դեռատի կիներու համար պատրաստուած, վերջերս լոյս տեսաւ: Հատորս, 178 էջերէ բաղկացեալ, պատկերազարդ եւ զոհացուցիչ տպագրութեամբ, կը պարունակէ շահեկան նիւթեր, պարզ եւ կրթիչ լեզուով մը գրուած: Զերմապէս յանձնարարելի է այս գրքին ընթերցումը: Կը յուսանք որ յարգելի բժիշկը իր բազմազբաղ ծամանակէն առիթը պիտի գտնէ գրելու իր մատենաշարին երրորդ հատորը, ուղղուած չափահաս ամուլներուն:

Գնելու համար զիմեւ հեղինակին կամ զըրաւաճառներուն:

ՄԷՍՈՒՏ ԿՕՄԻ. Լոյս տեսած է, «Տպարան Գոլճէն», հայատառ թրքարարբաւ գիրք մը Մեսութ Էօնը, որ լաւ ուղղեցոյց մըն է հոգեօր կեանքի փորձառութիւններուն համար, թարգմանուած Տօքթ. Ճ. Ի. Մէրիլի կողմանէ: Այս գրքոյկը, 144 էջերէ եւ երկու մասերէ կը բաղկանայ, իւրաքանչիւրը պարունակելով չորսական գլուխ: Կրօնքի մէջ ոմանք զգացումը կը շեշտեն, ուրիշներ՝ իմացականութիւնը, իսկ շատեր՝ կամքը, անտեսելով միւս երկու տարրերը: Բայց ուէ բնականոն հոգեւոր կեանք մը արդիւնքն է այս երեքին, կամեցողութիւն, զգացում եւ իմացականութիւն: Այս գիրքը գրուած է այս ներգաշնակ միութիւնը իւր մեկնակէտ ընդունելով:

Բաւորդ մէճիտի կը ծախուի այս գիրքը, որուն համար պէտք է զիմեւ թարգմանչին, փոստարկ թիւ 287, Հալէպ. մեծաքանակ գնումներու համար կարեւոր գեղջ պիտի ըլլայ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

ԿԻՐԱԿԻ. Հոգ մի ընեմ: Մասք. 6. 25-33
Աշխարհաւէր մարդը հոգերով նեղուած է: Միշտ կը վախնայ թէ ապագան վտանգի մէջ է: Հարստութիւնը, առողջութիւնը իր ձեռքէն պիտի ելլեն, գանոնք չի պիտի կրնայ վայելել: Այս կեանքի ներկայ նիւթական բարիքները իրեն համար ամէն բան են. իթէ անոնք պակսին, ինքը ամէնէն թշուառ մարդը կըլլայ: Քրիստոնեան ալ այս աշխարհի բաները կը փնտռէ, կը վայելէ, սակայն անոնց համար հոգ չ'ընէր. իր վստահութիւնը Աստուծոյ վրայ է, իւր ներսիկին բնակող Սուրբ Հոգիին յանձնած է ինքզինքը:

Աղոթք. Ո՛վ Տէր. եկուր իմ մէջս բնակէ, զո՛ւն եղիր իմ բաժինս, հոգիս Բեզ կը փնտռէ, Բեզմով լեցուր իմ սիրտս: Յանուն Յիսուսի: Ամէն:

ԵՐԿՈՒՇԱԲԻ. Յալիսեմարսն Յոյս, Բ. Կօրն. 4. 7-10:

Փորձութիւններու եւ տառապանքներու ժամանակ համբերութիւն ունենալու շնորհքը կը վայելի: Այն ատենները զուէ քեզ Յիսուսի աւելի մօտ կ'զգա՞ս: Քրիստոսի փորձութեան յաղթող զօրութիւնը քու մէջդ ալ կը գտնե՞ս: Եթէ այս շնորհքը ունիս, հոգեւոր կեանքդ օրէ օր պիտի զօրանայ:

Աղոթք. Կ'աղաչեմ, ո՛վ տէր, մաքուր եւ սուրբ կեանք մը շնորհէ ինծի: Քու Հարչաբանքներուդ եւ քու փրկագործութեանդ ծառանգակից եւ զործակից ըրէ զիս: Միշտ կ'ընեմ ինչ որ ուզես, կ'երթամ ուր որ ուզես, օգնէ ինձ: Ամէն:

ԵՐԵՔՇԱԲԻ. Սողոմոնի Աղոթքը: Ա.Թ.աղ. 8. 22-23, 26-30, 54-58:

Կ'աղօթե՞ս, կ'ապրի՞ս, կը գործե՞ս, որպէս թէ յաւիտենական, անսահման, արդար, ամենակալող, ամէնազէտ Աստուած մը քեզ կը տեսնէ, կը զիտէ, կը լըսէ, կը գթայ, կը սիրէ: Սիրող մաքուր, միաքղ բաց եւ խիղճըդ հանգա՞րտ է: Յիմարներու պատարագ մի՛ մատուցանէր Տէրոջը:

Աղոթք. Երկնաւոր Հայր, կ'աղաչենք, Սուրբ Հոգիովդ մաքրէ մեր սրտերը, լուսաւորէ մեր միաքերը, առաջնորդէ մեր քալումքը, զօրացուր մեր հաւատքը: Փառքիդ համար: Ամէն:

ՉՈՐԵՔԾԱԲԹԻ. Տեղը իմ Հովիտս է: Սաղ. 23:

Այս Սաղմոսը Աստուծոյ վրայ որդիական եւ կատարեալ վստահութիւն ունեցողներուն յատուկ է: Անիկայ քեզ պատրաստ եւ ճոխ ընթրիքի մը կը հրաւիրէ: Յատկապէս պատրաստուած սեղան մըն է: Հոն ամէն բան ապահով է: Աստուծոյ ներկայութեամբը լեցուն եւ լուսաւորուած է: Այս հրաւէրը մի՛ մերժէր երբէք:

Աղօթք. Ո՛վ Տէր, եւ մեր Վարդապետը, մեզի օգնական եւ պահապան եղիր: Փրկէ նեղեալները, ինկածները վերցուր: Ներկայութիւնդ յայտնէ չքաւորներու, բժշկէ տառապանքի մէջ եղողները, դարձի բեր մոլորածները, կերակրէ անօթիները, զօրացուր տկարները, մխիթարէ մարած սիրտերը: Թող աշխարհ գիտնայ թէ Դու ես միայն Աստուած, Յիսուս Քրիստոս Քու որդիդ եւ մենք Քու ժողովուրդդ եւ արօտիդ ոչխարներն ենք: Յիսուսի անունովը: Ամէն:

ՀԻՆԿԾԱԲԹԻ. Օրհնէր կախարհը. Մատթ. 5.17-20:

Յիսուս կը սորվեցնէր՝ թէ կեանքը ծածուկ աղբւրքէ մը բղխող գետակի մը կը նմանի: Աղբւրքը հոգին է, գետակը մեր ամեն օրուայ խօսքերը եւ գործերն են: Կեանքի տեսակը որոշողը հոգիին բնութիւնն է: Պէտք է որ հոգին նորոգուի Սբ. Հոգիով, որպէսզի կեանքը բարի, մաքուր եւ օգտակար ըլլայ:

Աղօթք. Ամենակարող Աստուած, կ'ուզենք մեր կեանքը եւ ճամբաները Քեզի նուիրել: Շնորհէ որ Քեզ պաշտենք սիրով եւ ուրախութեամբ: Օգնէ մեզի որ բարեգործութիւնով եւ սիրով Քեզ փառաւորենք: Տուր որ իմաստութիւն ունենանք Քեզ ճանչնալու եւ հնազանդելու: Ամէն:

ՈՒՐԲԱԹ. Աստուծոյ երկրպարսքեան ուրախութիւնը. Սաղ. 122.

Աստուծոյ եկեղեցին երթալէն հաճոյք կ'զգա՞ս: Ուրիշները միասին տանելու սովորութիւնը ունի՞ս: Գիտե՞ս թէ Դաւիթ մարգարէէն սկսեալ մինչեւ այսօր, ամեն երկրի եւ ամէն դարու մէջ բերաւորները Վաստուած իրեն ժողովուրդներուն հետ միասին պաշտելէն անհուն երջանկութիւն եւ մխիթարութիւն գտած են: Եթէ փորձած ես նոյն բանին կրնաս վկայել:

Աղօթք. Ո՛վ Հայր, մեր Աստուածը, Դուն մեզի պատասխանես, որ միշտ աղօթենք Քու

առջեւ ուրախութեամբ եւ երկեղածութեամբ: Դուն մեզ արթնցուր, հոգիով մեռածներս ողջնցուր: Առաջնորդէ մեզի: Մոլորածները տուն դարձուր: Անուանդ համար: Ամէն:

ՇԱԲԱԹ. Երախագիտ ըլլալու սրտանովեր: Կող. 1. 9-18:

Շատ անգամ կը տրտմիրք, թէ մեր զաւակները երախտապարտ չեն ըլլար մեզի, իրենց ըրած բարիքներուն համար: Սակայն մենք որչա՞փ շուտ կը մոռնանք Աստուծոյ առատ պարգեւները: Միշտ շնորհակալ հոգի մը ունենալու ենք Աստուծոյ:

Աղօթք. Քու անունդ Սէր է, ո՛վ յաւիտեանական, Ամէնակալ, Սուրբ Աստուած: Հոգւով եւ ճշմարտութիւնով Քեզ պաշտել կ'ուզենք: Մեզ անձնասիրութենէ, ապերախտութենէ, արծաթասիրութենէ ազատ պահէ: Տուր որ քու փառքդ աւելի որոշ տեաններ: Միշտ գովութեամբ մօտենանք Քեզի: Անհուն սիրոյդ համար: Ամէն:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՅԻՍՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ԿԵՐԱԿԻՆԷ

Մարկ. 6. 31-44, 8. 1-18

Մատթ. 18

Հինգ հազարին եւ չորս հազարին կերակրումը զատ գէպքեր են: Մէկուն միտքին այս մասին գոհացում տալու է՝ն ապահով ճամբան՝ զանոնք նկարագրող հատուածները զատ զատ գրել եւ ապա անոնց մանրամասնութիւնները բաղդատել է:

Աւետարաններուն չորսն ալ 5000ի կերակրումը կը պատմեն (Մատթ. 14. 13-21, Ղուկ. 9. 10-17, Յովհ. 6. 1-15), բայց երկրորդ գէպքը միայն Մարկոս եւ Մատթէոս կը պատմեն (15. 29-39): Առաջին գէպքը Յիսուսի հրապարակային գործունէութեան մէջ տաղնապալի պահ մը ստեղծեց, երբ Ան որոշապէս մերժեց քաղաքական ազատարար մը ըլլալ եւ յայտնեց իր թագաւորութեան զուտ հոգեւորական բնոյթը (Յովհ. 6), եւ այսպէս կորսնցուց իր շատ մը հետեւորդները: Այս երկու գէպքերէն անմիջապէս վերջ կուգայ Պետրոսի խոստովանութիւնը, որով Յիսուսի Մեսիա ըլլալը կը յայտնէր:

Հարցումներ որոնք երկու գէպքերը բաղդատելու կ'օգնեն: 1) Խնջ բան Յիսուսի

զուլթը շարժեց (6. 34, 8-2): 2) Կերակուրին տեսակը ո՞վ թելադրեց, 6. 35-36, 8. 1-3:

3) Աշակերտները ի՞նչպիսի լուծումներ գտան (6. 36-37, 8. 4: 4) Յիսուսի լուծումը ի՞նչ էր, Մատթ. 14. 16. 18, Մարկ. 6. 38, 8. 5:

Այս երկու դէպքերն ալ Յիսուսի Մեսիա ըլլալուն նշաններն էին (Յովհ. 6. 26ի Յուսարէն բնագիրը այսպէս է, «Դուք նշանները տեսաք»): Անոնք աշակերտներու համար հաւատքի դաս մը կը պարունակէին (Մարկ. 8. 14-21, Մատթ. 19. 5-12): Յիսուս մարդկային պէտքին նոր կերպով մը գոհացում տուաւ, Ան չըսաւ թէ ամէն մարդ թող իր թայ եւ ինքզինքը հոգայ (6. 36), պէտք եղած օգնութեան զինը, դրամ չգործածեց, (6. 37), Ան չըսաւ թէ օգնութիւնը անկարելի է (8. 4), բայց Ան՝ նոր հոգեւոր միջոց մը գործածեց: Օգնելու նպատակ մը ունեցիր, ունեցածովդ սկսէ, զայն Աստուծոյ ընծայէ, օգնութեան համար Անոր վստահէ, եւ սկսէ օգնելու: Այս կերպով դուք Աստուծոյ առիթ պիտի տաս քու միջոցովդ եւ քեզի հետ գործելու:

Դասեր. 1) Երբ ոեւէ մարդկային պէտքի մը աւելե գտնուիս, թող Աստուած զայն քու միջոցովդ գոհացնէ: Պատրոս այս դասը լաւ սորվեցաւ. (Տես Գործք. 3. 6.): 2) Եթէ դուն կը փափաքիս որ Աստուած քու միջոցովդ գործէ պէտքի մը գոհացում տալու համար, դուն ալ Աստուծոյ չափ անոր կարեկից գտնուիս: Քու բոլոր ունեցածդ պէտք է բերես եւ Աստուծոյ ձեռքերուն յանձնես՝ փափաքուած արդիւնքը յառաջ բերելու մէջ գործածուելու համար: Պատասխանեալ ազօթքի մը մէկ պայմանն է այս: 3) Արդիւնքը աստուածային նշան մը, Աստուծոյ կողմանէ կատարուած փրկանք մը պիտի ըլլայ, որ ոչ թէ քեզի՝ այլ Անոր փառք եւ պատիւ պիտի բերէ:

ՅԻՍՈՒՍ ԱՆԿԵՂՇՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ

Մարկ. 7. 1-23:

Մատթ. 23

Յասակաղիծ. 1-4, Երուսաղէմէն Իկած մասնախումբ մը, որ Փարիսեցիներէ եւ դպիրներէ կը բաղկանար, Յիսուսի աշակերտներուն ընթացքին մէջ յանցանքներ կը գտնեն: 5-8, Գանդատ Յիսուսի եւ Անոր պատասխանին ղէմ: Յիսուս Փարիսեցիներուն եւ դպիրներուն կը

ցուցնէ թէ իրենց հետեւած աւանդութիւնները Ս. Գրոց կը հակասեն, 9-13: Յիսուս ժողովրդին կը սորվեցնէ մաքրութիւններուն մասին աւանդութիւններու սխալը, եւ զայն կը բացատրէ իր աշակերտներուն:

Խորհրդածութիւն. 1. Ձեռքերու եւ առարկաներու այս լուացումները մաքրութեան սիրոյն համար չէին, այլ ծիսական սրբութեան համար: Այն որ զանոնք կը կատարէր արդար կը նկատուէր, իսկ չկատարողը՝ անկրօն եւ չար:

2. Գանդատը իրապէս Յիսուսի ղէմ էր, իրր իր աշակերտներուն ուսուցիչը: Յիսուս ուղղակի պատասխանեց. «Դուք կեղծաւորներ էք. այսպիսի կրօնք մը անօգուտ է. դուք դադրած էք մարդերու ըսելէ՝ թէ անոնք Աստուծոյ պէտք է հնազանդին. դուք կ'ըսէք թէ պահանջուածը միայն մարդկային հրահանգներու հնազանդիլ է»:

3. Յիսուս այս մարդերուն կը սորվեցնէ իրենց սխալը: Ան՝ Աստուծոյ պատուիրանքէն մէկը եւ աւանդութիւն մը իրարու հետ կը բազդատէ եւ անոնց կը ցուցնէ իրենց բացարձակ հակառակութիւնը: Ինչ որ ալ ըլլայ, կրօնքը պէտք չէ Աստուծոյ պարզ օրէնքը ջրէ: Ի՞նչպէս մէկը կրնայ Աստուծոյ տալ, իրր թէ Անոր տաճարին գործածութեանը համար, ինչ որ Աստուած պատուիրած էր իր ծնողքին տալ: Դիտելի է «այսպիսի շատ բաներ» բացատրութիւնը. 7. 8. եւ 13:

4) Շատ դժուար է մեզի հասկնալ՝ թէ այս վարդապետութիւնը ո՞րչափ օտար թուեցաւ ձեւապաշտ կրօնականութեան վարժուած ժողովուրդի մը: Այն ուղղակի հարուած մըն էր նաեւ ժողովուրդին վստահութիւնը վայելող կրօնական առաջնորդներու շատ մը ուսուցումներուն: Յիսուս ըսաւ թէ մարդերը անկրօնութիւնը նկատելու ատեն՝ պէտք է մեղքի վրայ խորհին, ո՞չ թէ ծէսերու վրայ:

Դասեր. 1) Աստուած ամենէն առաջ պէտք է գայ. ուրիշներու վարդապետութիւններէն առաջ Անոր խօսքը, ուրիշներու կանոններէն առաջ Անոր պատուիրանքը պէտք է գայ: 2) Հոգեւոր հնազանդութիւնը եւ ներքին արդարութիւն կը կազմեն ճշմարիտ կրօնքը: 2) Տալու մարդեր կան, որոնք Յիսուսի այս վարդապետութիւնը չեն հասկնար եւ անոր կը հակառակին (Յովհ. 4. 24, Փիլպ. 3. 3): Կարգա՝ Սամուէլի խօսքը Սաւուղի ուղղուած:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆԵՐՈՒՄԸ

(Շարունակաբար ճախողոյ քիւնն)

Հոգը կը փչէր, փոթորիկը խաւարին մէջ կը սաստկանար, ու Մարիա խրճիթին մէջ առանցին կը մտածէր: Արդեօք իրա՞ն անկուրիկ էր ապատիւ այս անտանելի կեանքէն...

Յանկարծ խրճիթին դուռը զարնուեցաւ, և Մարիա տակաւին իր տեղէն չը շարժած՝ դուռը ուժով հրուեցաւ ու խկոյն բացուեցաւ: Օտարական մը՝ երկայնահասակ, խոշոր մօրուքով, կանանչ զգեստով ու տարօրինակ գլուխարկով երևցաւ դրան սեմին վրայ, ու խիստ ձայնով «Ո՞վ կը բնակի հոս», զոչեց:

Մարիա վախէն ու զարմանքէն քար կը տրած էր, ան օտարականին երեսը իսկ նայելու քաջութիւնը չուէր, և հազիւ «Ես և իմ խեղճ հայրիկա», պատասխանեց զոգզողալով:

Որսորդը պատէն կախուած եղնիկին նաչելով «Ո՞ր է հայրիկդ», հարցուց բարկացած:

Մարիա իր վերջին ատիճառն վախցած ըլլալուն հակառակ՝ չը կրցաւ իր հօրը թաքստուցը ցոյց տալ, որովհետեւ այդ պիտի նշանակէր զայն մատնել, ու զիրենք կորստեան առաջնորդել: Բայց բան մը ըսած ըլլալու համար՝ «Տէր իմ, անշուշտ յոգնած էք», ըսելով կրակարանին քովի աթոռը ցոյց տուաւ: «Թերեւս անօթի էք, կ'ուզէ՞ք ապուր մը պատրաստեմ»:

Մարդը առանց խօսելու յառաջացաւ դէպի կրակարանը, նստաւ աթոռին վրայ և սկսաւ տաքնալ, ու քանի մը բոպէ ետքը Մարիա անոր մատոյց իր հօրը ընթրիքէն մընացած քիչ մը ապուրն ու կտոր մը չոր հացը:

Օտարականը շատ յոգնած, մտած ու անօթի էր: Ուստի այդ աղքատիկ ընթրիքը մեծ ախորժակով կերաւ:

Խրճիթին մէջ լուսթիւն կը տիրէր:

Ճամբորդը խոժուրդէմով կը նայէր պատէն կախուած եղնիկին, ու Մարիա տարաւոր չուէր չունէր թէ աս մարդը թաղաւորին որսի ընկերներէն մին էր: «Ի՞նչպէս կը համարձակի հայրդ որսորդութիւն ընել թաղաւորական արգիլեալ հողի վրայ», հարցուց օտարականը վերջապէս:

«Ո՞հ, տէր իմ», պատասխանեց Մարիա գրեթէ լալով, «Հայրիկս շարժարդ մը չէ, անիկայ չի կրնար ապրիլ իթէ չ'սրսայ: մինք չենք կրնար ուրիշ մարդոց պէս երջանիկ ապրիլ գիւղերու մէջ. հայրս ասկէ հինգ տարի առաջ յանցանք մը գործեց, անիկայ արգիլեալ հողի վրայ որսորդութիւն ըրաւ, անկէ մինչեւ հիմայ փախստական կը թափառի, մայրիկս, ա՛խ, անոյշ մայրիկս մեռած է, ու մենք, հայրս ու ես, այս առանձին խրճիթին մէջ շատ թշուառ կեանք մը կ'ապրինք, մենք երջանիկ չենք, ու երջանիկ չենք կրնար ըլլալ», ու արցունքները սրբելով շարունակեց: «Քանզի հայրիկս փախստական է, ան չուզէր որ արգիլեալ հողի վրայ որս ընէ, բայց ի՞նչպէս ապրինք, քանի որ այս անտանէն դուրս ելլել կարելի չէ, եթէ դուրս ելլէ, կը բռնուի ու թաղաւորին զինուորները կը կախն զինքը: Հայրիկս կը խորհի թէ մեր խրճիթը շատ ապահով է մեզի համար, և թաղաւորին զինուորները չեն կրնար գտնել զայն»:

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Դասխարակութեան Նորսակը Է. ՓԱՐԹՐԻՃ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ուսուցչին Պատրաստութիւնը Յ. ՊԱԳԱՆԵԱՆ

Ի՞նչ է Եկեղեցական Վերագործումը

Առաջնական Եկեղեցին

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹԲ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Կրօնարարոյական, Դիտական, Կրթական երկշաբաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խըրլուեան ԲԱԺԱՆՈՐԴԱԴԻՆ

Սուրբ Կամար տարեկան 2 Մէճրտ
Արտատահման » » 1 Տուար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE